ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«10» 11 2021 թ.
№ 27/01-1424

ք. Երևան Գայի պողոտա 19
հեռ. /+374 11/ 51-86-86
Ֆաքս. /+374 11/ 51-86-80
Էլ. փոստ. nor_norq@yerevan.am

«ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ք. Երևան, Բագրատունյաց 69

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (լրիվ) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.07.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/36» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքների կատարման Օրացուցային գրաֆիկի պահանջներով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված եղել 60 աշխատանքային օր, սակայն նշված ժամկետում աշխատանքները չեն կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՒՐԵՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Իրավաբանական բաժին
Ա. Կարապետյան
Հեռ.՝ 011-51-86-28